Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 18.10.2023թ. թիվ 2317257786 որոշումը բեկանելու և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին

<<20>>10 2023թ.7-13 10874 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ն.Սարգսյանս, վերանայելով Արթուր Բաղդասարյանի ՄԴ/86612-23 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Քաղաքացի Արթուր Բաղդասարյանը (ծանուցման հասցե՝ քաղաք Երևան, Խաչատրյան փողոց, 100 տուն) դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 18.10.2023թ. թիվ 2317257786 որոշումը՝ նշելով, որ հաշվառման համարանիշն անընթեռնելի է:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 18.10.2023թ. թիվ 2317257786 որոշումը ենթակա է բեկանման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 18.10.2023թ. թիվ 2317257786 որոշման տեսանյութում և լուսանկարում իրավախախտում կատարած տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշն **անընթեռնելի** է, ինչի հետևանքով հնարավոր չէ ապացուցել որոշման հիմքում դրված փաստական հանգամանքները:

<<Վարչարարության հիմունքերի և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի <<Բ>> կետի համաձայն՝ անձի եւ վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Նկատի ունենալով իրավախախտման փաստի ապացուցման անհնարինությունը և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 18.10.2023թ. թիվ 2317257786 որոշումը բեկանել և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճել.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում.
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Արթուր Բաղդասարյանին.

Ն. Սարգսյան

Կատարող՝ Ա.Ալեքսանյան
Հեռ.011544783